Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Մ. Գալստյան

01.09.2022թ.

# Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի

# աշխատանքային տարեկան ծրագիր

## ՀՀ ԿԳՄՍՆ

## «Երևանի Ստ. Զորյանի անվան թիվ 56 հիմնական դպրոց»

## ՊՈԱԿ

Դասարան՝ Iդ

Դասվար՝ Գ.Անդրեասյան

2022-2023 ուսումնական տարի

1. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում
   - ✓ Աշակերտներիվարքի կանոնների հիշեցում
   - ✓ Ուշացումների ու բացակայությունների կանխում
   - ✓ Շարունակել ձևավորել բարեկիրթ ու հանդուրժողական վերաբերմունք ուսուցիչների, մեծահասակների և միմյանց նկատմամբ
   - ✓ Պահպանել ստեղծված համերաշխ կոլեկտիվը
   - ✓ Նպաստել փոխադարձ օգնության, համագործակցային և հանդուրժող միջավայրի ձևավորմանը
   - ✓ Էքսկուրսիաների և այցելությունների միջոցով ծանոթացնե լազգային ավանդական արժեքներին:

2.Հայեցի դաստիարակություն

2.1.**Հոգևոր դաստիարակություն**-Դաստիարակության այս բնագավառի հիմքում նախտեսվում է դնել ազգային արժեքների պահպանման կարևորագույն սկզբունքը, սեփական ժողովրդի ձեռքբերումների ճանաչողությունն ու պահպանությունը: Պահել և պահպանել մայրենի լեզուն, ազգային սովորույթներն ու հոգևոր արժեքները, կրոնն ու եկեղեցին, որը հայապահպանության հիմքն է: Զանազան զրույցների միջոցով դաստիարակել սերուդ, նվիրվածություն հայրենիքի նկատմամբ:

2.2.**Գեղագիտական դաստիարակություն**-Անձի լիարժեք ձևավորման համար շատ կարևոր նշանակություն ունի նաև գեղագիտական դաստիարակությունը: Երեխաների մեջ վերհանել գեղեցիկը նկատելն ու գնահատելը:

2.3.**Ռազմահայրենասիրական դաստիարակություն**-Որպես պատերազմող երկիր՝աշակերտների մեջ անհրաժեշտ է սերմանե լսեր հայրենիքի նկատմամբ, հարգանք պետության և պետական խորհրդանիշների նկատմամբ: Ռազմահայրենասիրության ամրապնդման նպատակով ստեղծել՝ Հայրենիքի պաշտպանի՝ անկյուն, պատրաստել պաստառներ՝ նվիրված ազատամարտի հերոսներին:

2.4.**Ֆիզիկական դաստիարակություն**-Դաստիարակության այս բնագավառում ճշտե լաշակերտների առողջության մասին անհրաժեշտ տվյալներ: Ձևավորել անվերապահ խնամք և հոգատար վերաբերմունք սեփական անձի՝մարմնի և կենցաղի նկատմամբ: Զարգացնել կամային հատկանիշներ, կամք, նպատակասլացություն, հետևե լանձնական հիգիենային:

2.5. **Աշխատանքային դաստիարակություն**-Նպաստել մասնագիտական կողմնորոշմանը, աշակերտի մեջ սեր և եռանդ սերմանել ցանկացած աշխատանքի նկատմամբ: Մասնակցել դպրոցական շաբաթօրյակներին: Սովորեցնե լգնահատել սեփական և այլոց աշխատանքը:

2.6. **Բնապահպանական դաստիարակություն**-Աշակերտների մոտ ձևավորել բնության նկատմամբ հարգանք և խնամակալ վերաբերմունք: Աշակերտները կիմանան բնապահպանական համամոլորդակային խնդիրները, կկարողանան դրանք համադրելՀայաստանյան էկոլոգիական խնդիրներին: Հնարավորության դեպքում կազմակերպել նաև բնարշավներ, մաքրել որևէ բնականտարածք, խնամել շրջակայքի ծառերը և մասնակցել ծառատունկի:

3. **Դպրոց-ընտանիք կապը**- Մշտական կապի մեջ լինել ծնողների հետ, պարբերաբար կամ ըստ անհրաժեշտության կազմակերպել հանդիպումներ, քննարկել կարևոր հարցերը: Ծնողներին ներգրավել դասարանական խնդիրների լուծմանը, աշակերտների առօրյայի կազմակերպմանը: Ցանկալի է նրանց ակտիվ մասնակցությունը նաև համադպրոցական խնդիրների լուծմանը:

## I կիսամյակ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| | Սեպտեմբեր | | |
| I շաբաթ | ➢ Ծնողական ժողովի կազմակերպում.<br>ա) Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցի իրազեկում սովորողներին և ծնողներին<br>բ) դասարանի ծնողական խորհրդի կազմի ընտրություն<br>գ) կազմակերպչական հարցեր<br>➢ Դասագրքերի բաժանում<br>➢ Գիտելիքի, գրի և դպրության օր: <<Գիտելիքով մենք ուժեղ ենք>><br>➢ Էլեկտրոնային օրագրի հետ ծանոթացում ծնողական համայնքին:<br>➢ Սովորողների և ծնողների իրազեկում դպրոցի ներքին կարգապահական կանոններին | 01.09-09.09 | Դասվար<br><br>Գրադարանավար<br><br>Դասվար |
| II շաբաթ | ➢ Անկախության օրվան նվիրված զրույց<<Ես պիտի ապրեմ իմ հայրենիքում>>խորագրով<br>➢ Հանդուրժողականություն.<br>➢ <<Ես և իմ համադասարանցիները>>թեմայի քննարկում<br>➢ Անդրադարձ անձնական հիգիենայի կանոններին:<br>➢ Նկարների ցուցահանդես-մրցույթ<<Աշուն>>թեմայով | 12.09-16.09 | Դասվար |
| <u>IIIշաբաթ</u> | ➢ Սովորողների և ծնողների իրազեկում աղետների և ռիսկերի նվազեցման անվտանգության կանոններին<br>➢ Հանդիպում-քննարկում ծնողների հետ՝ մանկավարժական միասնական պահանջի ապահովման նպատակով<br>➢ Զրույց<<Խաղաղություն և հայրենիք>>թեմայի շուրջ | <u>19.09-23.09</u> | Դասվար |
| <u>IVշաբաթ</u> | ➢ Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին<br>➢ Անհատական աշխատանք | <u>26.09-30.10</u> | Դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| | սովորողների և նրանց ծնողների հետ՝ ըստ անհրաժեշտության /հաճախումներ, ուշացումներ, առաջադիմություն/<br>➢ | | |
| Vշաբաթ | ➢ Զորյանական շաբաթ.<br>ա) Ստեփան Զորյանի կյանքի պատմությունից վերցված հետաքրքիր տեղեկությունների հաղորդում բ)հեքիաթների և պատմվածքների ընթերցումներ և վերլուծություններ<br>գ) զորյանական հեքիաթների և հերոսների պատկերում<br>➢ Ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցում:<br>➢ Կազմակերպչական աշխատանքներ, դասագրքերի և գրենական պիտույքների ստուգում | 03.10-07.10 | Դասվար |
| VIշաբաթ | ➢ Սովորողների կրթականկարիքի գնահատում<br>➢ Ցուցահանդես-մրցույթ աշնանային տերևներով<br>➢ <<Ա>> տառին նվիրված միջոցառում | 10.10-14.10 | Դասվար |
| VIIշաբաթ | ➢ Ընկերություն, փոխօգնություն, հանդուրժողականություն թեմաների շուրջ անցկացնել զրույցներ<br>➢ Այց Խնկո Ապոր անվ. գրադարան | 31.10-4.11 | Դասվար |
| VIII շաբաթ | ➢ Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկումդասպրոցեսում և դասամիջոցներին | 07.11-11.11 | Դասվար |
| IXշաբաթ | ➢ Ձեռնարկատիրական կրթություն. <<Փոխանակում, արժեք, դրամ>><br>➢ Ծնողական ժողով<br>➢ Տեսանյութի դիտում և քննարկում<br>➢ Աշակերտների կարգապահությանը վերաբերվող հարցեր: | 14.11-18.11 | Դասվար |
| Xշաբաթ | ➢ Զրույց՝ <<Բնական աղետները>>թեմայի շուրջ<br>➢ ա)անհրաժեշտ կարևոր գործողությունների, միջոցառումների իրազեկում՝ արտակարգ | 21.11-25.11 | Դասվար, զինղեկ՝ Մ.Միքայելյան |

| | | | |
|---|---|---|---|
| | իրավիճակների ժամանակ<br>➢ բ) դիտել<<Աղետիկը>>անիմացիոն ֆիլմը, քննարկել | | |
| XI շաբաթ | ➢ Անհատական աշխատանք խնդրահարույց աշակերտների հետ | 28.11-02.12 | Դասվար |
| XIIշաբաթ | ➢ Զրույց՝<<Պահպանենք առողջությունը ճիշտ սնվելով>><br>ա)որն է առողջ սնունդը<br>բ) անիմացիոն ֆիլմերի դիտում և քննարկում | 5.12-9.12 | Դասվար |
| XIII - XIVշաբաթ | ➢ Ամանօրյա ներկայացման դիտում<br>➢ Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում, ինչ ստացանք- ինչ տվեցինք:<br>➢ Առաջադիմության արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը<br>➢ _Ծնողական ժողով. Իրազեկում առաջադիմության արդյունքներին<br>➢ I կիսամյակում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների վերլուծություն, հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը | 12.12-23.12 | Դասվար |

# II կիսամյակ

| Ուսում նական շաբաթ ներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատար ման ժամկետը | Կատա րողներ |
|---|---|---|---|
| I | Ծնողական ժողովի կազմակերպում.<br>ա) II կիսամյակում նախատեսվող աշխատանքների մասին հաղորդում<br>բ) կազմակերպչական աշխատանքներ | 23.01-27.01 | Դասվար |
| II | ➢ <<Ինչպես պաշտպանվել վիրուսներից>> սահիկի ցուցադրում<br>➢ Զրույց՝ «Անձնական հիգիենան տանը և դպրոցում» թեմայով | 30.01.-03.02. | Դասվար |
| III | Ծնողիանդիպում<br>➢ Ընթացիկ առաջադիմության արդյունքների քննարկում,<br>➢ Խորհրդակցում դասավանդող ուսուցիչների հետ դասարանի ուսումնադաստիարակչական խնդիրների վերաբերյալ | 06.02.-10.02. | Դասվար |
| IV | ➢ Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին:<br>➢ Անհատական աշխատանք խնդրահարույց սովորողների հետ | 13.02.-17.02. | Դասվար ծնողներ, ուսուցիչ ներ |
| V | Թումանյանական շաբաթ.<br>➢ Հ.Թումանյանի հեքիաթների ընթերցում և հեքիաթների մոտիվներով ֆիլմերի դիտում և քննարկում.(«Տերն ու ծառան»,«Զախորդ Փանոսը»,«Շունն ու կատուն» «Անբան Հուռին»,«Կիկոսի մահը»,«Բարեկենդան»)<br>➢ Գիրք նվիրելու օր | 20.02.-24.02. | Դասվար |
| VI | ➢ Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին:<br>➢ Անհատական աշխատանք խնդրահարույց սովորողների հետ<br>➢ Մայրենիի օր<br>ա/Մայրենիին նվիրված ստեղծագործական աշխատանքներ(Այբբենարանի ձևավորում, բանաստեղծություններ, աքրոստիկոսներ) | 27.02.-03.03. | Դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| VII | ➢ **«Մայր իմ անուշ ու անգին»** խորագրով՝<br>ա/բացիկների պատրաստում,<br>բ/ դասարանական անկյունների ձևավորում | 06.03.-10.03. | Դասվար |
| VIII | ➢ Աշակերտների առաջադիմությանը վերաբերող հարցեր. Աջակցել դժվար առաջադիմող աշակերտներին<br>➢ Զրույց՝ <<Որքանով եմ ընդունում և առաջնորդվում մեծերի խորհուրդներով>><br>➢ Այցելություն Խնկո Ապոր ազգային մանկական գրադարան: | 13.03.-17.03. | Դասվար |
| IX | ➢ **Սովորողների նախնական առաջադիմության արդյունքների ամփոփում, իրազեկում ծնողներին, առանձին դեպքերում քննարկում դասավանդող ուսուցիչների, անհատական աշխատանք ծնողների հետ՝ ըստ անհրաժեշտության :**<br>➢ Զրույց՝ <<Ուրախ Զատիկ>> | 03.04.-07.04. | Դասվար |
| X | ➢ Ծնողհանդիպում<br>ա/Ընթացիկ առաջադիմության արդյունքների քննարկում<br>բ/ Աջակցել դժվար առաջադիմող աշակերտներին<br>➢ Երգերի ունկնդրում և ուսուցում՝ նվիրված մայրության և գեղեցկության օրվան | 10.04-14.04 | Դասվար |
| XI | ➢ Սովորողների կրթական կարիքի գնահատում<br>➢ Էկոլոգիական խնդիրներ. զրույց՝<br><<Աղմուկը որպես շրջապատի աղտոտվածություն և նրանից առաջացած խնդիրները>> | 17.04.-21.04. | Դասվար |
| XII | ➢ **Զրույց՝ Հայոց ցեղասպանության 108-րդ տարելիցին նվիրված ՝** «Հայ կանանց խիզախությունը» թեմայով:<br>➢ **Այց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր**<br>➢ Զրույց՝ <<Ինչի՞ց են առաջանում անհամաձայնությունները. լուծման տարբերակները>> | 25.04.-28.04. | Դասվար |
| XIII | ➢ **Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին:**<br>➢ **Անհատական աշխատանք խնդրահարույց սովորողների հետ**<br>➢ **<<Հրաժեշտ Այբբենարանին >> միջոցառման անցկացում** | 02.05.-05.05. | Դասվար |
| XIV | ➢ **Մայիսյան հաղթանակներ.**<br>**Զրույց մայիսյան տոների և հաղթանակների մասին.**<br>«Հայրենական մեծ պատերազմից մինչև մերօրյա հերոսները» | 08.05.-12.05. | Դասվար |
| XV | ➢ **Ընթացիկ առաջադիմության արդյունքների քննարկում,**<br>➢ **Խորհրդակցում դասավանդող ուսուցիչների հետ դասարանի ուսումնադաստիարակչական խնդիրների վերաբերյալ** | 15.05.-19.05. | Դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| XVI | ➢ Մայիսի 28-ը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության ծնունդ (տեղեկության հաղորդում)<br>➢ Երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում, ինչ ստացանք - ինչ տվեցինք, ինչպես պետք է իրագործել իմացածը:<br>➢ Առաջադիմության արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը<br>➢ Ծնողական ժողով. տեղեկացնել աշակերտների անձնական բնութագրիչների միջոցով<br>➢ | 22.05.-26.05. | Դասվար |